



**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ք. Երևան  
28.02.2022թ.**

**ԲԴԽ-2-Ո-Կ-1**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՁԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՎԱՋԳԵՆ ՌՇՏՈՒՆՈՒՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՐԱՎԻՐՎԱԾ 28.02.2022 ԹՎԱԿԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ  
ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

*նախագահությամբ՝*

*Բարձրագույն դատական խորհրդի  
նախագահի պաշտոնակատար*

*Գ. Զհանգիրյանի,*

*մասնակցությամբ՝*

*անդամներ*

*Գ. Բեքմեզյանի,  
Դ. Խաչատրյանի,  
Մ. Մակյանի,  
Լ. Մելիքջանյանի,  
Ա. Մխիթարյանի,  
Ս. Չիչոյանի,  
Վ. Քոչարյանի,*

*Արդարադատության նախարարի  
տեղակալ*

*Ե. Թումանյանցի,*

*Արդարադատության նախարարի  
ներկայացուցիչներ*

*Գ. Հարությունյանի,  
Հ. Սանոյանի,*

Վ. Ռշտունուն

Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր

Ս. Սահակյանի,

Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի  
ներկայացուցիչ

Ռ. Մելիքյանի

Ա. Շիլաջյանի

*քարտուղարությամբ՝*

դռնբաց նիստում, քննության առնելով Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Վազգեն Ռշտունու և վերջինիս ներկայացուցիչների միջնորդությունը՝ ապացույց պահանջելու մասին, Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման, քանի որ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է որպես ապացույց ուսումնասիրել կարգապահական վարույթի հարուցման համար առիթ հանդիսացած Արդարադատության նախարարության վերահսկողության ծառայության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող Նարինե Խալաթյանի կողմից ներկայացված զեկուցագրի հիմքում ընկած ուսումնասիրությունները:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հարցի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատավորից, կարգապահական վարույթը հարուցած մարմնից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու ներկայացնել հարցի քննության համար նշանակություն ունեցող ապացույցներ, որոնք տվյալ անձանց ազդեցության ոլորտում են՝ սահմանելով ժամկետ դրանք Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու համար, իսկ որոշումը կամովին չկատարելու դեպքում այն ներկայացնել կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 92-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նիստը հետաձգվում է նաև՝ հարցի քննությունը տվյալ նիստում անհնարին դարձնող այլ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում:

Հաշվի առնելով, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից բավարարվել է ապացույց պահանջելու մասին միջնորդությունը և պահանջել է համապատասխան ապացույց՝ ուսումնասիրության համար, ուստի Բարձրագույն դատական խորհուրդն անհրաժեշտ է համարում հետաձգել սույն գործով նիստը:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 92-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով՝ Բարձրագույն դատական խորհուրդը,

### **ՈՐՈՇԵՑ**

1. Արդարադատության նախարարությունից պահանջել կարգապահական վարույթի հարուցման համար առիթ հանդիսացած զեկուցագրի հիմքում ընկած ուսումնասիրությունները:

2. Արդարադատության նախարարության կողմից նշված տեղեկատվությունը տրամադրելու համար սահմանել 3-օրյա ժամկետ:

3. Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Վազգեն Ռշտունուն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 28.02.2022 թվականի նիստը հետաձգել և նշանակել սույն թվականի մարտի 7-ին ժամը 12:00-ին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ**

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**ԱՆԴԱՄՆԵՐ՝**

**Գ. ԶՀԱՆԳԻՐՅԱՆ**

**Գ. ԲԵՔՄԵՂՅԱՆ**

**Դ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ**

**Մ. ՄԱԿՅԱՆ**

**Լ. ՄԵԼԻՔՉԱՆՅԱՆ**

**Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ**

**Ս. ՉԻՉՈՅԱՆ**

**Վ. ՔՈՉԱՐՅԱՆ**